



#### 45. ՄՈՒՇՈՆ ՈՒ ՆՈՒՇՈՆ

Յառեջ ժամանակ՝ տղեմ՝ կապրեր, անուն Մուշու: Հդրա պասս ու մամ օր կը մեռնին, աղեն կառնե ուր մոտ մշակ-հովիվ: էդ աղի անուն խուռշուղ կէղնի, շատ հարուստ ու տմաքար, կունենա մեկու-ճար աղջիկ մե, քրնց լուանակ խորոտ, շուտիս-ըր խմիս՝ ըդոր իշկիս:

Աչք խըսմի ըսկի կը հարցո՞ւ աղա ու մշակ, տղեն ու աղջիկ կը տեսնան, աչք կը թալին չիրար, քանի կէրթա՝ կը տաքնան, հմա արի տես, օր տղեն շիշխընա լուս-լուսով, մութ գիշերով հանալըտի աղջկան, օշխար օր կը բերե կթի՝ կը նստի Մուրատ գետի յեղը, ուր փող կը փչե, աղջիկ գելնա տնեն՝ հեռվանց զիրար կը տեսնան:

Տղի փող կըսե.

— Նուշո՞:

Աղջիկ ա՞խ կը քաշե, կըսե.

— Մուշո՞:

Ժամանակ մե գընցնա, գող-ավազակներ կը թալին վըր օշխլ-րի ճղին, կը քշին չընցուն Մուրատ գետի էն ափ, հովիվ անջախ կազատվի, գիկա կանի բանձըր տեղ մե փող կը փչե, աղջիկ կը հասկընա, օր խազար է էկի, զօշխար գողցի տարեր ին, գիկա մըտ հեր, կըսե.

— Անհոգ նստեր իս, չե՛լի, զմեր օշխար դող-ավազակներ զարկի տարեր ին:

Խուռշուղ աղեն զայլաքուշտ կէղնի, կըսե.

— է՞, դու ի՞մալ չիմցար:

— Մուշոն փող փչելով հասկըցուց:

— Աղե՛կ,— կըսե՛ս,— էրթամ սա՛նք՝ օղո՛րդ է՛:

Աղեն հավար կը թալե դեղ, գեղացիք կը ժողովին չիգան, կէր-  
թան գետափ, ինչ տեսնան՝ գող-ավաղակներ զօշխար չընցուցեր ին  
էն ափ, քողեր ին, ուրանք ըռհաթ նստուկ՝ քեֆ-ուրախութեն կէնին:

— Է՛,— կըսե՛ս աղեն,— ի՛նչ էնինք օր ղօշխար դառձունք բե-  
րինք, կոխվ շընք կոնա էնի, ընդոք ղենք ունին, մենք շունինք:

— Ա՛ղա,— կըսե՛ս հովիվ,— կովով շը դառձըվի, թե դառձըվի՛  
փող փշելով կը դառձըվի:

— Ի՛մալ,— կը հարցու աղեն:

— Ես կը փշիմ՝ օշխար գելնա քողից, գիկա դըխ էս ափ: Մի-  
նակ մեկ պայման կը դնիմ՝ թե չես դառձուցի՝ նուշոն կիտաս ընձի,  
շը դառձուցի՝ գիմ վիզ կտրես:

Խուռուղ աղեն գընկնա մըջ մտածմունքին, կը թալե-բոնե,  
վեոջ դիկա էն մտքին՝ ուր աղջիկ ի՛մալ իտա հովվու մե, էդի շէղ-  
նելիք բան է, կըսե՛ս.

— Մո՛ւշո, օշխըրի կես քըզի, դա՛ռձու:

— Չէ՛,— կըսե՛ս հովիվ,— իմ պայման՝ պայման է, յա՛ նուշոն  
կիտաս, յա՛ օշխըրներ կը կորցու:

— Է՛,— կըսե՛ս մըջ մտքին աղեն,— խոսքմ՝ ըսեց, բերա՛ն իրի-  
ցավ:

— Խաբո՛ւլ իս,— կը հարցու հովիվ:

— Խաբուլ իմ,— կըսե՛ս աղեն:

Մուշոն զփող կը դնե բերնին, կը փշե, օր կը փշե, չառեջ-չառուջ  
էծն ուրին կը թալե ջուր, քողուկ օշխըրներ գելնան չոտքի, ըդրա  
չետեկն կը թափվին ջուր, կը լողան, գընցնան էս ափ, մինակ  
պլնջոտ մաքի մե կը մնա գող-ավաղակներու ձեռք:

— Ա՛ղա,— կըսե՛ս հովիվ,— հաշվե զօշխըրներ:

Աղեն կը հաշվե, կը տեսնա մեկ պակաս է, կըսե՛ս.

— Մո՛ւշո, քո պայման ավրավ, օշխըրներուց մեկ պակաս է,  
իմ աղջիկ շըմ իտա:

Գեղացիք ինչ կէնին-չէնին՝ աղեն շը կոտրի:

— Չէ՛ որ շէ՛,— կըսե՛ս:

— Ա՛ղա,— կըսե՛ս հովիվ,— էդ խդեր օշխըրներու մեջ մեկ  
պլնձոտ մաքի օր պակսի, աշխար խո շա՛վիրի, էդ օշխըրի խաթրուն  
մեկ-էրկու տարի անվարձք հովվութեն կէնիմ, խաբո՛ւլ իս:

— Չէ՛,— կըսե՛ս աղեն,— խաբուլ չիմ:

— Դու ու քու խիղճ,— կըսե՛ս հովիվ, կըռըկի, կանի մեկ դեն:

Աղեն զօշխըրներ կը քշե, գիկա տուն, գիշեր-ցերեկ կը մտածե՛



ի՞մալ էնե, օր հովվուց աղատվի, կորոշե՛ ըդոր խաբե տանե տեղ մե՛ սպանե, կորցու:

Մուշոն գիկա մըտ նուշոն, կըսե.

— Քու պապ ընծի խաբեց, գուր՛ւմ խաբեց, ըդի աստված կը վերցո՞ւ:

— Մո՛ւշո, խուրբան, ըսկի քու սիրտ մը կո՛տրի, ախշարընցում էղնի՛ ես քո՛ւմն իմ, դու ի՛մն իս:

— Չէ՛, չըմ ավտընա, հեր խաբեց, աղշիկ լե կը խաբե:

Նուշոն կըսե.

— Մո՛ւշո, մեռնիմ քըզի, հեր խաբեց՝ քըզի չըր սիրի, ես ի՛մալ խաբիմ՝ օր կը սիրիմ:

Կըսե, կը փաթվի տղին, կը պագե ու կը պագե:

Աղեն ուր շար միտք չը հեռեցու, չեւնա մտնա, նստի կանի՛ կը մտածե՛ զհովիվ սպանե, կորցու: Աղշիկ սարբաստ կէղնի, ուր պապու մտադրութեն գիմնա, գիկա կանի չառեշ:

— Ես գինա՛մ,— կըսե,— դու մտադրեր իս զՄուշոն սպանիս: Յորի՛ն մեղքի տակ կը մտնաս, քու խոստ չը կատարիս, չըս լսե՛րի՛ էն օր խոստ կիտա ու չը կատարե, ալլախնեբու ալլախն է, էն օր չիտա՛ կը կատարե, առուծ է:

Աղեն կը կատղի, կըսե.

— Օր իմ աչքի չառեշ մեռնիս՝ մե՛կ է, քըզի հովվու չըմ իտա: Ես գինամ, դուք գուզիք զիսի դուս էնիք, դառնաք իմ մալ ու մըլքի, իմ տան ու տեղի տեր, հմա քանի ես սաղ իմ՝ էդ բանն էղնելու չէ:

Նուշոն, մըշ սրտին մոմուռ կսկուծ՝ կէրթա, կը քաշվի ուր չօղեն, կը լսե՛ հանդե հովիվ փող կը փշե, հմա՛լ կը մղկտա, օր քար ու շուր, ծառ ու ծաղիկ հըտ ուրին գիլան, կը հասկըցու, օր մե՛կ ճար կա՛ փախնինք հըտ չիրար, էն վախտ քու հեր չուզե-չուզե՛ կը կոտորվի:

Մեծորեք ըսեր ին՝ քամու չառեշ կանվի, սիրու չառեշ շառնըվի, սիրողներուն նա՛ յոթ ծով, նա՛ էրկինք հասնող կրակ կոնա բաժնե. գիշեր մե՛ Մուշոն ու Նուշոն կը փախնին կէրթան սուրբ Գանիելի վանք, ուրանց կը թալին վարդապետու յոտք, կը խնդրվին. օր շուտ մե ուրանց պսակե: Վարդապետ գեղելութեն դիմնա՛ զըդոց կը պսակե, գեւնա գիկա մըտ աղեն:

— Օռնած,— կըսե,— չորի՛ն իս գժրիստոս մոռցի, դառձի կուպաշտ, քու սիվտակ թալի ներս, սեն էրի դուս. գու աղշիկ ունիս, տղա շունիս, հարկ է օրինաց՝ քու չընցման չետն՝ սուն ու ճրագ էղնի իդա աստվածաշեն տան: Պլնշոտ մաքիմ՝ կորցուցի, չըհել-ըմրիկ տղեմ՝ իս գտի, էլ ի՛նչ գուզիս:

Խուռշուղ աղեն կը տեսնա, օր բան-բանից չընցեր է, շարեն-  
ի՛նչ, դե՛լնա հարսընքի պատրաստութեն կը տեսնա, իրեք օր ու իրեք  
գիշեր հարսնիք կէնե, հմա կըսին, օր էդ տմաքար՝ շուրի մեռնել՝  
չը մոռցավ ուր պլնջոտ մաքին, ու հոգին տալու վախտ, կըսին,  
զմաքին տեսեր է, հըտ ուրին առի, տարի էն դիու աշխարք, դրա՛խտ,  
թե՛՞ դժոխք, ըդի կը թորկիմ ձըզի, օր գուք ըսիք:

